Զգտիր Կատարելության

Ներածություն արդյունաբերական նմուշների մասին փոքր և միջին ձեռնարկությունների համար

Մտավոր սեփականության
գործակալություն

ՀՏԴ 347.77 : 620 : 334
ԳՄԴ 67.99 (2Հ) 3+30.182+65.5
Ձ-338

Ձգտիր կատարելության.- Եր.:
Ձ-338 Մտավոր սեփական. գործակալ., 2010.- 32 էջ:

Ձգուշացում. Սույն հրատարակության հիմնական նպատակը առարկայի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ ապահովելն է. այն չի փոխարինում մասնագիտացված իրավաբանական խորհրդատվությանը:
Սույն հրատարակությունը համապատասխանեցվել է ՀՀ մտավոր սեփականության օրենսդրությանը եւ վերարտադրվել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) նախապես ձեռք բերված գրավոր թույլտվությամբ:

Բնօրինակ անգլերեն լեզվով գրքույկի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է ՄՍՀԿ-ին: Հրատարակության անգլերեն տարբերակը մատչելի է www.wipo.int/sme/en/documents/guides/ ինտերնետային կայքից:

Համապատասխանեցված տարբերակի համար ՄՍՀԿ-ն պարտավորություն կամ պատասխանատվություն չի կրում. պատասխանատվությունը կրում է ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը:

ՀՏԴ 347.77 : 620 : 334
ԳՄԴ 67.99 (2Հ) 3+30.182+65.5

ISBN 978-99941-2-359-9

© Մտավոր սեփականության գործակալություն, 2010
© ՄՍՀԿ, անգլերեն բնօրինակի նկատմամբ, 2006

Սույն հրատարակության որեւէ մաս չի կարող վերարտադրվել կամ փոխանցվել որեւէ ձեւով կամ եղանակով, էլեկտրոնային կամ մեխանիկական , առանց հեղինակային իրավունքի իրավատիրոջ գրավոր թույլտվության՝ բացառությամբ օրենքով թույլատրված ձեւերի:

Ներածություն

Սույն ուղեցույցը «Մտավոր սեփականությունը բիզնեսի համար» շարքի երկրորդ հրատարակությունն է: Այն պատկերացում է տալիս արդյունաբերական նմուշների մասին, որոնք կարևոր գործոն են շուկայում ապրանքների հաջողությունն ապահովելու համար:

Մտավոր սեփականության մասին օրենսդրության մեջ արդյունաբերական նմուշը սահմանվում է որպես արտադրանքի գեղագիտական կամ արտաքին տեսք, որը նոր է և ինքնատիպ: Այն դարձնում է արտադրանքը գրավիչ կամ կիրառելի տպավորություն է թողնում սպառողի վրա, իսկ արտադրանքի արտաքին տեսքի պատկերի թողած ընդհանուր տպավորությունը այն հիմնական գործոններից մեկն է, որը վճռորոշ ազդեցություն է ունենում սպառողի վրա՝ մի ապրանքը մյուսից գերադասելու առումով: Արդյունաբերական նմուշների միջոցով կազմակերպությունները կարողանում են առանձնացնել իրենց արտադրանքները նմանատիպ արտադրանքներ արտադրող մրցակիցների արտադրանքներից, մշտապես հնարավորություն ունենալով բարելավել իրենց արտադրանքի տեսքը: Ահա թե ինչու է այդքան կարևոր արդյունաբերական նմուշների համապատասխան պահպանության ապահովումը:

Ուղեցույցի նպատակն է ծառայել որպես ներածություն՝ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) արդյունաբերական նմուշների պահպանության վերաբերյալ: Այստեղ ընդգրկված են պահպանվող արդյունաբերական նմուշների օրինակներ և ցուցադրումներ, դրանց առնչվող հարցեր և պատասխաններ: Ուղեցույցի ազգային ուղղվածություն ունեցող տարբերակները պատրաստվում են ազգային համապատասխան հաստատությունների և տեղական գործընկերների հետ, որոնց դիմումը ՄՍՀԿ-ին ուղեցույցի պատճենը ստանալու համար խրախուսվում է:

Կամիլ Իդրիս,
ՄՍՀԿ Գլխավոր տնօրեն

Բովանդակություն

Էջ

1. Ինչ է արդյունաբերական նմուշը _____ 3

2. Արդյունաբերական նմուշի իրավական պահպանությունը _____ 6

3. Արդյունաբերական նմուշի պահպանությունն օտարերկրյա պետություններում _____ 19

4. Արդյունաբերական նմուշի իրավական պահպանության կիրառումը _____ 21

5. Արդյունաբերական նմուշի պահպանության այլ իրավական միջոցները _____ 23

1. Արդյունաբերական նմուշներ

Ինչ է արդյունաբերական նմուշը

Առօրյա խոսքում արդյունաբերական նմուշ» ասելով հասկանում ենք իրի ընդհանուր ձևն ու գործառույթները: Օրինակ, բազկաթոռի մասին ասում ենք, որ այն «լավն է» այն դեպքում, երբ այն նստելու համար հարմարավետ է, և մեզ դուր է գալիս նրա արտաքին տեսքը: Արդյունաբերության համար, ընդհանրապես, իրի նախագծումը ենթադրում է դրա գործառութային և գեղագիտական հատկանիշների զարգացումը, նկատի ունենալով այնպիսի հանգամանքներ, ինչպիք են իրի պահանջարկը շուկայում, արտադրության համար կատարված ծախսերը կամ տեղափոխման, պահեստավորման, նորոգման և օգտագործման հեշտությունը

Սակայն մտավոր սեփականության մասին օրենսդրության իմաստով **«արդյունաբերական նմուշը» իրի արտաքին տեսքն է ամբողջությամբ կամ մասնակիորեն, որը դրա բնորոշ հատկանիշների, մասնավորապես ուրվագծերի, գույների, ձևերի, կազմվածքի, ինչպես նաև նյութերի և (կամ) դրա զարդանախշի արդյունքն է:** Այլ խոսքով, այն վերաբերում է միայն բազկաթոռի արտաքին տեսքին: Իրը կարող է ունենալ տեխնիկական կամ գործառութային հատկություններ, սակայն «արդյունաբերական նմուշը», որպես մտավոր սեփականության օրենքի կատեգորիա, վերաբերում է միայն պատրաստի արտադրանքի արտաքին տեսքին:

Արդյունաբերկան նմուշ կարող է լինել արդյունաբերական կամ տնայնագործական ցանկացած արտադրանք. նորաձևությունից ու ձեռագործ իրերից, տեխնիկական ու բժշկական գործիքներից սկսած մինչև ժամացույցները, թանկարժեք զարդերն ու պերճանքի այլ առարկաները, կենցաղային սպառման արտադրանքներից, խաղալիքներից, կահույքից ու էլեկտրական սարքավորումներից սկսած մինչև ավտոմեքենաներն ու ճարտարապետական կառույցները, տեքստիլ արդյունաբերության զարդանախշերից սկսած մինչև սպորտային սարքավորումները:

Արդյունաբերական նմուշը ներառում է նաև համալիր (բարդ) արտադրանքում միավորելու համար նախատեսված փաթեթվածքները, ձևավորումները, գրաֆիկական խորհրդանիշերը և տպագրական տառաշարերը, բացառությամբ համակարգչային ծրագրերի: «Համալիր (բարդ) իրը» այն արտադրանքն է, որը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, որոնք կարող են փոխարինվել իրի թույլատրելի ապամոնտաժման և մոնտաժման դեպքում:

Որպես կանոն, արդյունաբերական նմուշն ունի.

- ծավալային (եռաչափ)՝ հատկանիշներ. իրի արտաքին տեսքը,

- տարածական (երկչափ) հատկանիշներ՝ զարդանախշեր, ուրվագծեր, ձևեր կամ գույներ, կամ մեկ կամ մի քանի այդպիսի հատկանիշների համադրություն,
- ծավալային և/կամ տարածական հատկանիշների համադրություն:

Եռաչափ նմուշի օրինակ

Ինչու է անհրաժեշտ արդյունաբերական նմուշների պահպանությունը

Արդյունաբերական նմուշն ավելացնում է արտադրանքի արժեքը: Այն ապրանքը դարձնում է **գրավիչ և տպավորություն է թողնում** սպառողի վրա, և նույնիսկ կարող է տվյալ ապրանքի վաճառքի միակ պատճառը լինել: Ուստի, արժեքավոր դիզայնի պահպանությունը պետք է լինի ցանկացած դիզայների կամ արդյունաբերողի գործարար ռազմավարության էական մասը: Մտավոր սեփականության ազգային կամ

Ստեղծագործական մոտեցումը բիզնեսում

Հաճախ ձեռնարկությունները զգալի ժամանակ և միջոցներ են հատկացնում իրենց արտադրանքների արտաքին գեղագիտական տեսքը բարելավելու նպատակով: Նոր և յուրօրինակ նմուշներ հաճախ ստեղծվում են, հետևյալ նպատակներով.

1. Համապատասխանեցնել արտադրանքը շուկայի որոշակի մասի պահանջներին.

Որոշ ապրանքների արտաքին դիզայնի փոքր փոփոխությունների միջոցով (օրինակ՝ ժամացույցների), այդ ապրանքները հարմարեցնում են տարբեր տարիքային, մշակութային կամ սոցիալական խմբերի պահանջներին: Ժամացույցի հիմնական գործառույթը մնում է նույնը, բայց երեխաների ու հասուն մարդկանց ճաշակը արտաքին տեսքի նկատմամբ սովորաբար տարբեր է:

2. Ստեղծել նոր տեղ մրցակցային շուկայում.

Մրցակցային շուկայում շատ ձեռնարկություններ իրենց նոր ապրանքների նկատմամբ փորձում են ստեղծել շուկայական պահանջարկ այդ ապրանքների տեսքի բարելավման միջոցով, որպեսզի հնարավոր լինի դրանք տարբերակել մրցակիցների արտադրանքից: Սա կիրառվում է ինչպես հասարակ իրերի համար, ասենք՝ փականներ, կոշիկներ, գավաթներ և ափսեներ, այնպես էլ ծայրահեղ թանկարժեք իրերի համար, ինչպիսիք են թանկարժեք զարդերը, համակարգիչները կամ ավտոմեքենաները:

3. Ամրապնդել բրենդի դիրքերը.

Հաճախ արդյունաբերական նմուշի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը համակցվում է տարբերակիչ ապրանքային նշանների կիրառման հետ՝ այդ ընկերության բրենդի արժեքը բարձրացնելու նպատակով: Բազմաթիվ ձեռնարկություններ հաջողությամբ ստեղծել կամ վերափոխել են իրենց բրենդը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ապրանքի արտաքին տեսքի ձևավորման վրա:

www.aipa.am

միջազգային գրասենյակում արդյունաբերական նմուշի գրանցման հիման վրա դրա պահպանությունն ապահովելով, դրա իրավատիրոջն ընձեռվում է **այն օգտագործելու և առանց իր թույլտվության երրորդ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք:**

Օգտագործումը կարող է վերաբերել, մասնավորապես, դրա պատրաստմանը, վաճառքի առաջարկությանը, վաճառքին, ներմուծմանը կամ նմուշը ներառող կամ այն մարմնավորող արտադրանքի օգտագործմանը, ինչպես նաեւ նման նպատակներով դրա պահեստավորմանը: Սա իմաստ է հաղորդում բիզնեսին, քանի որ բարելավում է բիզնեսի մրցունակությունը և հաճախ լրացուցիչ եկամուտ է բերում ներքոնշյալ ձևերով.

Սպայական դաշույն, հեղ.՝ Արթուր Խաչատրյան

- Նմուշի գրանցումը հնարավորություն է տալիս դրա իրավատիրոջը արգելել մրցակիցներին նմուշի պատճենումը և դրանով էլ ամրապնդում գրանցողի մրցակցային դիրքը:

- Արժեքավոր նմուշի գրանցումը նպաստում է տվյալ արտադրանքի ստեղծման և գովազդման համար ներդրված գումարների արդարացի փոխհատուցմանը և դրանով իսկ ավելացնում է եկամուտը:

- Արդյունաբերական նմուշը բիզնեսի ակտիվ է, որը կարող է ավելացնել ձեռնարկության և նրա արտադրանքի առևտրային արժեքը: Որքան նմուշը հաջող է, այնքան բարձր է նրա բերած օգուտը ձեռնարկությանը:

- Պահպանվող արդյունաբերական նմուշի իրավատերն իր իրավունքներն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է պայմանագրով զիջել այլ անձի եւ (կամ) կնքել լիցենզային պայմանագիր: Արդյունաբերական նմուշի լիցենզավորումը հնարավորություն է տալիս տեղ գրավել այնպիսի շուկայում, ուր այլ ձևով հնարավոր չէ մուտք գործել:

- Արդյունաբերական նմուշի գրանցումը խրախուսում է արդար մրցակցությունը և ազնիվ առևտուրը, որոնք իրենց հերթին խթանում են բազմազան գեղագիտորեն գրավիչ ապրանքների լայնածավալ արտադրությունը:

Ինչու իրականացնել արդյունաբերական նմուշի պահպանությունը Եվրամիությունում

Պատճենումը կանխելու համար	70.0%
Ձեռնարկության քաղաքականությունն է	23.4%
Մրցակցության մեջ առաջ անցնելու համար	20.3%
Կազմակերպության վարկանիշի համար	10.1%
Որպեսզի մարդիկ չմտածեն, թե «ես եմ պատճենում»	6.5%
Այլ	5.8%

Աղբյուր. OHIM, Prospective Study about the Design Եվրամիության մակարդակով գրանցման պահանջ (2002).

Ավելի մանրամասն դիզայնի մասին

Չնայած տարբեր արտադրության սեղանների գործառութային բաղադրիչները զգալիորեն չեն տարբերվում միմյանցից, սակայն ամենայն հավանականությամբ դրանց արտաքին տեսքը հիմնական որոշիչ գործոնն է շուկայում հաջողություն ունենալու համար: Ահա թե ինչու շատ երկրներում արդյունաբերական նմուշների գրանցամատյաններն ունեն բավականին երկար ցուցակ այնպիսի կենցաղային ապրանքի համար, ինչպիսին սեղանն է:

Սեղան: Հեղ.՝ Խաչատուր Աղաջանյան

2. Արդյունաբերական նմուշի իրավական պահպանությունը

Ինչպես պահպանել արդյունաբերական նմուշը

Երկրների մեծ մասում օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանություն ստանալու համար **արդյունաբերական նմուշը պետք է գրանցվի**: Գրանցված արդյունաբերական նմուշի համար տրվում է **արդյունաբերական նմուշի գրանցման վկայագիր** (արդյունաբերական նմուշի վկայագիր): Արդյունաբերական նմուշի վկայագիրը տրվում է այն անձին, ում անունով գրանցված է արդյունաբերական նմուշը (արդյունաբերական նմուշի իրավատեր): Արդյունաբերական նմուշի վկայագիրը հաստատում է արդյունաբերական նմուշի գրանցման փաստը, առաջնությունը, ինչպես նաեւ դրա նկատմամբ բացառիկ իրավունքը:

Արդյունաբերական նմուշի պահպանության համար հայտատուն **հայտ է ներկայացնում այն երկրի մտավոր սեփականության (ՄՍ) ազգային գրասենյակ,** որտեղ ցանկանում է իրականացնել նմուշի պահպանությունը (ՄՍ գրասենյակների internet կայքերի ցուցակը տրված է հավելված 1-ում): Արտերկրում արդյունաբերական նմուշի իրավական պահպանության համար տես 3-րդ բաժինը :

Անհրաժեշտ է նշել, որ որոշ երկրներում կամ ընդհանուր տնտեսական տարածքներում, ինչպիսին Եվրամիությունն է, վերջին շրջանում ընդունված օրենսդրությամբ **չգրանցված արդյունաբերական նմուշների** համար հնարավոր է ստանալ սահմանափակ պահպանություն, տվյալ նմուշը Եվրամիությունում հրապարակելու թվականից՝ երեք տարի ժամանակով:

Ըստ Եվրամիության օրենսդրության գրանցված նմուշը հնարավորություն է տալիս ձեռնարկություններին փորձելու շուկայում իրենց արտադրանքը, նախքան նմուշը գրանցելու համար անհրաժեշտ

ջանքերն ու միջոցները գործադրելը, ինչը շատ դեպքերում կարող է հաջողություն չունենալ շուկայում: Ի հավելումն դրա, նմուշը կարող է շուկայում մնալ բավականին կարճ ժամանակ, հատկապես նորաձևության բնագավառում: Այսպիսի արտադրանքի համար չգրանցված նմուշը հիանալի տարբերակ է:

Այնուամենայնիվ, ապրանքի արտադրման պահից սկսած, դիզայներներն ունեն 12 ամիս ժամանակ նմուշի գրանցման համար: Չգրանցված նմուշին տրվող պահպանությունը սահմանափակ է այն առումով, որ դրա իրավական պահպանությունն ավելի դժվար է, քան գրանցված նմուշինը, և ավելի կարճաժամկետ է, քանի որ դրա տևողությունը երեք տարի է ի հակադրություն Եվրամիությունում գրանցված նմուշների համար սահմանված 25 տարի ժամանակահատվածի:

Սույն ուղեցույցում խոսվում է հինականում գրանցված նմուշների մասին, սակայն կարևոր է նշել, որ որոշ երկրներում արդյունաբերական նմուշների պահպանության համար գոյություն ունեն այլընտրանքային տարբերակներ:

- Գոյություն ունեցող ազգային օրենքներին և նմուշի տեսակին համապատասխան արդյունաբերական նմուշների պահպանության այդպիսի այլընտրանքային տարբերակ է հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունը: Ընդհանուր առմամբ, հեղինակային իրավունքը պահպանում է գրականության և արվեստի ոլորտի ստեղծագործությունները: Քանի որ որոշ տեսակի նմուշներ որոշ երկրներում համարվում են արվեստի կամ կիրառական արվեստի գործեր, ապա այդ երկրներում կիրառվում է հեղինակային իրավունքի պահպանությունը, որը բավականին հրապուրիչ տարբերակ է փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) համար:

- Ի հավելումն դրա, որոշ երկրներում, եթե արդյունաբերական նմուշը շուկայում օգտագործվում է որպես ապրանքային նշան, ապա այն պահպանվում է որպես եռաչափ նշան: Սա հնարավոր է այն դեպքում, երբ ապրանքի ձևը կամ դրա փաթեթավորումը համարվում է տարբերակիչ նշան:

- Որոշ երկրներում անբարեխիղճ մրցակցության մասին օրենքը նույնպես կարող է պահպանել ձեռնարկության արդյունաբերական նմուշը անարդար մրցակիցների կողմից կրկնօրինակելուց:

Հեղինակային իրավունքի միջոցով նմուշի պահպանության մասին ավելի մանրամասն տես 5-րդ բաժնում:

Արդյունաբերական նմուշի իրավական պահպանությունից բխող իրավունքները

Երբ արդյունաբերական նմուշը գրանցվում է, դրա իրավատիրոջը տրամադրվում է երրորդ անձի կողմից **օրենքով չթույլատրված վերարտադրումն արգելելու իրավունք:** Սա ներառում է երրորդ անձի կողմից այնպիսի **արտադրանքի պատրաստումը, առաջարկումը, ներմուծումը,**

արդյունահանումը կամ վաճառքն արգելելը, որի մեջ մարմնավորված է կամ որի համար կիրառվում է նմուշը: Գրանցված արդյունաբերական նմուշի պահպանության սահմանները որոշվում են տվյալ երկրում կամ տարածաշրջանում գործող օրենքին և օրեսդրական փորձին համապատասխան:

Ինչը կարող է գրանցվել որպես արդյունաբերական նմուշ

Որպես ընդհանուր կանոն, իրը, որպես արդյունաբերական նմուշ գրանցելու համար, կախված տվյալ երկրում գործող օրենքից, պետք է համապատասխանի հետևյալ հիմնական պահանջներին (արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմաններ).

- Նմուշը պետք է լինի «**նոր**»: Արդյունաբերական նմուշը նոր է, եթե չի հայտնաբերվել նույնական արդյունաբերական նմուշ, որը հանրամատչելի է դարձել մինչեւ պետական լիազոր մարմին հայտ ներկայացնելու թվականը, կամ եթե խնդրարկվում է առաջնություն, ապա՝ մինչեւ առաջնության թվականը, ընդ որում, արդյունաբերական նմուշները համարվում են նույնական, եթե դրանց բոլոր հատկանիշները համընկնում են կամ տարբերվում են ոչ էական մանրամասներով:

- Նմուշը պետք է լինի «ինքնատիպ»: Արդյունաբերական նմուշը ինքնատիպ է, եթե ընդհանուր տպավորությունը, որը թողնում է տեղեկացված սպառողի վրա, տարբերվում է այդպիսի սպառողի վրա ցանկացած այլ արդյունաբերական

Բացառիկ իրավունքներ

Ենթադրենք, Ձեր կազմակերպությունը նախագծել է մի անձրևանոց նորարարական դիզայնով, գրանցել է այն պետական լիազոր մարմնի մտավոր սեփականության ՄՍ գրասենյակում և դրանով ստացել է բացառիկ իրավունքներ այդ նմուշի անձրևանոցների նկատմամբ: Սա նշանակում է, որ, եթե հայտնաբերեք, որ որևէ մրցակից պատրաստում, վաճառում կամ ներմուծում է անձրևանոցներ, որոնք նույնն են կամ էականորեն ունեն նույն դիզայնը, Դուք կկարողանաք արգելել նրան ձեր նմուշն օգտագործել և, ամենայն հավանականությամբ, ստանալ հատուցում այն վնասի համար, որ կրել է Ձեր բիզնեսը նմուշի անօրինական օգտագործման/անբարեխիղճ մրցակցության հետևանքով:

Ուրեմն, եթե չեք կարող ստիպել մրցակիցներին չարտադրել մրցակցող արտադրանք, ապա կարող եք արգելել նրանց.

- պատրաստել այնպիսի արտադրանք, որը ճիշտ Ձեր արտադրանքի նման է,
- առանց վճարելու օգտագործել Ձեր ստեղծագործական կարողությունը:

Մանրամասների համար, թե ինչպես կարող եք պաշտպանել Ձեր իրավունքները, խորհուրդ է տրվում դիմել մտավոր սեփականության/ՄՍ հարցերով զբաղվող իրավաբանի:

Հուշանվեր ("Եկեղեցիներ"): Հեղ.՝ Եղիշե Ներսիսյան

նմուշի թողած ընդհանուր տպավորությունից, որը հանրամատչելի է դարձել մինչեւ հայտի ներկայացման թվականը, կամ եթե խնդրարկվում է առաջնություն, ապա՝ մինչեւ առաջնության թվականը:

Ավանդաբար, պահպանունակ արդյունաբերական նմուշները վերաբերում են ստեղծված արտադրանքին, ասենք, կոշիկի ձևին, ականջօղի դիզայնին կամ թեյնիկի վրա արված զարդանախշին: Սակայն որոշ երկրներում թվային աշխարհում պահպանությունն աստիճանաբար տարածվում է մի շարք այլ արտադրատեսակների և դիզայնի տեսակների վրա: Սրանք ներառում են համակարգչային կոդերի միջոցով ստեղծվող էլեկտրոնային աշխատասեղանի պատկերակները, էլեկտրոնային տառաշարերը, համակարգչային մոնիտորների և բջջային հեռախոսների գրաֆիկական դիսփլեյը, և այլն:

Ինչը չի կարող լինել պահպանունակ արդյունաբերական նմուշ

Շատ երկրներում սովորաբար գրանցման ենթական չէ այն նմուշը, որը.

- չի համապատասխանում արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմաններին՝ նորությանը և ինքնատիպությանը, ինչպես բացատրվեց վերը.
- բնութագրվում է միայն տեխնիկական գործառույթով. նմուշի տեխնիկական կամ գործառութային հատկանիշները կախված յուրաքանչյուր դեպքից պահպանվում են մտավոր սեփականության/ՄՍ այլ իրավունքներով (օրինակ՝ գյուտ, օգտակար մոդել կամ առևտրային գաղտնիք),
- ներառում կամ նմանակում է խորհրդանիշներ, խորհրդանշաններ, զինանշաններ, որոնք այլ են, քան Փարիզյան կոնվենցիայի 6ter հոդվածով սահմանվածները, եւ որոնք առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացնում հանրության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գրանցման համար առկա է համապատասխան իրավասու մարմնի թույլտվությունը. (ինչպես ասենք ազգային դրոշը),
- դրա օգտագործումը հակասում է հանրության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին:

Կարևոր է նաև ավելացնել, որ շատ երկրներում ձեռքի աշխատանքը չի պահպանվում արդյունաբերական նմուշի մասին օրենքով, քանի որ այդ երկրների օրենսդրությամբ պահանջվում է, որ արտադրանքը, որի նկատմամբ կիրառվում է ա րդյունաբերական նմուշը, լինի «արդյունաբերական իր» կամ այն հնարարավոր լինի վերարտադրել «արդյունաբերական միջոցներով»:

Կախված տվյալ երկրի ազգային օրենսդրությունից, կարող են լինել այլ սահմանափակումներ այն առումով, թե ինչը չի կարող գրանցվել որպես նմուշ: Օգտակար է խորհրդակցել ՄՍ գործակալի կամ համապատասխան ազգային ՄՍ գրասենյակի հետ:

Ինչպես է կատարվում արդյունաբերական նմուշի գրանցումը

Ձեր երկրում նմուշը գրանցելու համար սովորաբար անհրաժեշտ է կատարել հետևյալը.

- Լրացնել ազգային ՄՍ գրասենյակի կողմից տրվող հայտի ձևը (տես հավելված 1, որտեղ տրված է ՄՍ գրասենյակների ցուցակն իրենց վեբ կայքերի հասցեներով, որտեղ կարելի է գրանցել նմուշը (սովորաբար տրամադրվում է չափաձև): Արդյունաբերական նմուշի հայտը պետք է պարունակի պետական լիազոր մարմնի կողմից սահմանված փաստաթղթերը. դիմում՝ արդյունաբերական նմուշը գրանցելու մասին, իրի կամ մեկ հայտում ներառված իրերի տեսքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացահայտող լուսանկարը(ները) կամ գրաֆիկական պատկերը(ները): Եթե արդյունաբերական նմուշը, ներառյալ՝ մանածագործական նմուշը կամ հոլոգրամը, երկչափ է, ապա ըստ օրենքով սահմանված կարգի, իրի արտաքին տեսքի (ամբողջությամբ կամ մասնակիորեն) լուսանկարի կամ գրաֆիկական պատկերի փոխարեն փորձաքննության համար հայտին կարող է կցվել իրի կամ դրա մի մասի նմուշը (այն ավելի լավ հասկանալու կամ նրա գործվածքը և նյութը զգալու համար):

- Որոշ երկրներում Ձեզանից կպահանջվի նաև կցել արդյունաբերական նմուշի(ների) գրավոր նկարագրությունը կամ նորարարության հաստատումը: Սովորաբար նկարագրությունը վերաբերում է դիզայնին, այլ ոչ թե արտադրանքին՝ որի նատմամբ այն կիրառվել է: Այն պետք է հստակ բացահայտի արտաքին տեսքի նորությունը և ինքնատիպությունը, նշելով բնորոշ բոլոր էսթետիկ առանձնահատկությունները:

- Կպահանջվի նաև վճարել սահմանված պետական տուրք:

- Արդյունաբերական նմուշի հայտ ներկայացնելու, հայտով նամակագրություն վարելու, ինչպես նաեւ օրենքով նախատեսված իրավունքների ձեռքբերման եւ տնօրինման հետ կապված գործողությունները կատարելու համար հայտատուն կարող է նշանակել հավատարմատար: Արդյունաբերական նմուշների հավատարմատար կարող են լինել օրենքով նախատեսված այն անձինք, ովքեր պետական լիազոր մարմնում հանձնել են որակավորման քննություն: Այս դեպքում կազմվում է մեկ այլ փաստատթուղթ, որը հաստատում է լիազորությունների փոխանցումը հավատարմատարին:

Որոշ ՄՍ/մտավոր սեփականության գրասենյակներ նմուշի գրանցումը կատարում են միայն պաշտոնական փորձաքննություն անցկացնելուց հետո, որի ընթացքում ստուգվում է հայտի, լրացուցիչ նյութերի կամ ապացույցների բովանդակության եւ ձեւի համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված

պահանջներին: Այլ գրասենյակներ կարող են կատարել ըստ էության փորձաքննություն՝ գրանցամատյանով ստուգելով նորությունը և ինքնատիպությունը գրանցված նմուշների համեմատությամբ: Ներկայումս ավելի ու ավելի շատ գրասենյակներ են գրանցում կատարում՝ առանց նորությունը և ինքնատիպությունը ստուգելու:

Նմուշի գրանցումից հետո այն մուտքագրվում է արդյունաբերական նմուշների գրանցամատյանում, հրապարակվում է պետական լիազոր մարմնի պաշտոնական տեղեկագրում և տրվում է արդյունաբերական նմուշի գրանցման վկայագիր: Որոշ երկրներում/տարածաշրջաններում հնարավոր է ներկայացնել հրապարակումը հետաձգելու մասին դիմում, որի դեպքում նմուշը գաղտնի է պահվում օրենքով սահմանված ժամկետով: Մինչեւ պետական լիազոր մարմնի պաշտոնական տեղեկագրում գյուտերի, օգտակար մոդելների տրված արտոնագրերի կամ գրանցված արդյունաբերական նմուշների մասին տեղեկությունների հրապարակումը դրանց հայտերի նյութերը համարվում են գաղտնի: Արդյունաբերական նմուշների գաղտնիության աստիճանի որոշումը, դրանց օգտագործումը եւ դրանց մասին տեղեկությունների հրապարակումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Արտասահմանում արդյունաբերական նմուշի պահպանության մասին ավելի մանրամասն տրված է 3-րդ բաժնում:

Որքան ժամանակ է պահանջվում նմուշը գրանցելու համար

Ընդհանուր առմամբ, կախված ազգային մտավոր սեփականության/ՄՍ գրասենյակից, արդյունաբերական նմուշի գրանցման գործընթացը տևում է 6 - 12 ամիս կամ ավելի երկար, կախված մի շարք հանգամանքներից: ինչպես ասենք, եթե փորձաքննության ընթացքում կան առարկություններ կամ վիճելի հարցեր ներկայացված նմուշի՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Ինչու է կարևոր նմուշի գաղտնիության պահպանումը մինչև գրանցումը

Եթե ցանկանում եք արդյունաբերական նմուշին տալ իրավական պահպանության, այսինքն՝ գրանցել մտավոր սեփականության գրանցման համակարգերից մեկում, ապա դրա գաղտնիության պահպանումը էական է, քանի որ, ընդհանրապես, նմուշի պահպանության հիմնական պահանջն այն է, որ նմուշը պետք է լինի «նոր»: Եթե ցույց եք տալիս Ձեր նմուշն ուրիշներին, ապա խորհուրդ է տրվում գաղտնիության մասին գրավոր պայմանագրի կնքում, որը կպարունակի նմուշի գաղտնիությունը: Եթե արդյունաբերական նմուշը հրապարակվել է կամ ցուցադրման կամ վաճառքի միջոցով բացահայտվել է մինչեւ պետական լիազոր մարմին հայտ ներկայացնելու թվականը, ապա այն համարվում է հանրամատչելի դարձած՝ հանրության սեփականության մասը, եթե չի տրվել «ժամանակավոր իրավական պահպանության»:

Արդյունաբերական նմուշի էության բացահայտումը հաշվի չի առնվում, եթե դա տեղի է ունեցել հայտը ներկայացնելուն նախորդող, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող տասներկու ամսվա ընթացքում՝ հեղինակի (հայտատուի) կամ արդյունաբերական նմուշի էության մասին նրանցից ուղղակի կամ անուղղակի տեղեկություն ստացած անձի կողմից (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն) կամ եթե արդյունաբերական նմուշը հանրամատչելի է դարձել դիզայների կամ նրա իրավահաջորդի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի արդյունքում: (Տես նաև «Արդյունաբերական նմուշի պահպանությունը օտարերկրյա պետություններում», էջ 16):

Ինչ է «ժամանակավոր իրավական պահպանությունը»

Որոշ երկրներում օրենսդրությամբ թույլատրվում է ժամանակավոր իրավական պահպանություն գրանցման համար՝ սովորաբար նմուշի հրապարակման, գաղտնիքի բացահայտման կամ հրապարակման պահից սկսած վեց ամսվա կամ մեկ տարավա ընթացքում: Սա այն դեպքում, երբ նմուշը կրող իրերը վաճառվում, ցուցադրվում են արդյունաբերական ցուցահանդեսում կամ տոնավաճառում, կամ հրապարակվում են գրացուցակում (կատալոգներ), բրոշյուրներում կամ գովազդում նախքան գրանցման համար հայտ ներկայացնելը: Անձը, որի իրի արտաքին տեսքն ամբողջությամբ կամ

Օրինակ. Մանկական խաղալիքներ

Իր նոր արտադրանքի պահպանությունն ապահովելու նպատակով Լեւոն Ժամկոչյանը 2001թ. դեկտեմբերին ներկայացնում է ազգային հայտ արդյունաբերական նմուշի գրանցման համար:

Գրանցումն ավարտելուց հետո, Լեւոն Ժամկոչյանը կարողացավ առևտրային շրջանառության մեջ դնել տարբեր երկրներում, ուղղակիորեն կամ լիցենզիաների տրամադրման միջոցով: Նմանատիպ գործարքի արդյունքում արտադրանքի հաջողությունը զգալի կլինի:

Մանկական ավտոմեքենաները առաջատար արտադրատեսակներից մեկն է, եւ ձեռնարկությունը արդյունաբերական նմուշի պահպանությամբ տրամադրված մենաշնորհով՝ կշարունակի օրինական ձեւով արտահանել իր արտադրանքը այլ երկրներում:

մասնակիորեն ցուցադրվում է պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսում, կարող է ցուցահանդեսի փակման օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, պետական լիազոր մարմին հայտ ներկայացնել՝ խնդրարկելով առաջնություն, որը սահմանվում է արտադրանքի արտաքին տեսքն ամբողջությամբ կամ մասնակիորեն ցուցադրման առաջին օրով (ցուցահանդեսային առաջնություն):

Ժամանակավոր իրավական պահպանության ժամանակահատվածում կարող եք առևտրայնացնել Ձեր նմուշը, որը չի կորցնի իր «նորությունը», և գրանցման ներկայացնել:

Այնուամենայնիվ, քանի որ սա չի կիրառվում բոլոր երկրներում և ամեն դեպքում սահմանափակ է ժամանակի առումով, հաճախ, մինչև նմուշի պահպանության համար դիմելը, ավելի նպատակահարմար է նմուշի գաղտնիության պահպանումը: Ի հավելումն սրա, նմուշի ժամանակավոր պահպանության ընթացքում ոչ մի բացառիկ իրավունքներ չեն ծագում (չնայած այն բանին, որ Ձեր նմուշը ինքնաբերաբար պահպանվում է հեղինակային իրավունքի կամ անբարեխիղճ մրցակցության մասին օրենքով, կախված համապատասխան ազգային օրենսդրությունից: Հեղինակային իրավունքի մասին ավելի մանրամասն տես 5-րդ բաժին):
Որքան է արդյունաբերական նմուշի պահպանության ժամկետը
Տարբեր երկրներում գրանցված արդյունաբերական նմուշի պահպանության պայմանները տարբեր են: Համաձայն ՀՀ օրենսդրության, արդյունաբերական նմուշը կարող է պահպանվել հայտի ներկայացման թվականից սկսած 5 տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ: Արդյունաբերական նմուշի իրավատերը կարող է երկարաձգել դրա պահպանության ժամկետը մեկ կամ մի քանի անգամ, յուրաքանչյուր անգամ հինգ տարի ժամկետով, ընդհանուր առմամբ մինչեւ հայտի ներկայացման թվականից քսանհինգ տարին լրանալը:

Որքան արժե արդյունաբերական նմուշի պահպանությունը

Փաստացի վարձավճարները զգալիորեն տարբեր են տարբեր երկրներում: Անհրաժեշտ է հիշել, որ պահպանության գործընթացում պետք է վճարվեն օրենքով սահմանված պետական տուրքեր:

1. Գրանցման վարձավճարներ են մուծվում ազգային կամ տարածաշրջանային մտավոր սեփականության/ՄՍ գրասենյակ: Դրանց չափը տատանվում է կապված գրանցման ենթակա նմուշների թվից (արդյունաբերական նմուշի հայտը կարող է ներառել մի քանի արդյունաբերական նմուշներ, պայմանով, որ դրանք վերաբերում են արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման մեկ դասին, բացառությամբ զարդանախշերի) և այն երկրների թվից, որտեղ ցանկանում եք կատարել գրանցումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Օրինակ, Եվրոմիության երկրներում մեկ

համայնքային նմուշի (Community Design) գրանցումն արժե 350 եվրո: Այս գումարը կարող է հասնել 1,925 եվրոյի, եթե հայտը ներառում է 10 նմուշ: Վարձավճարների մասին ճշգրիտ մանրամասներ կարելի է ստանալ ՄՍգործակալից/արտոնագրային հավատարմատարից կամ ՄՍ/մտավոր սեփականության տվյալ գրասենյակից:

2. Եթե նախընտրում եք հայտի դիմումը գրանցելիս օգտվել մասնագետի խորհրդատվությունից, ապա վճարվում է նաև նշանակված արտոնագրային հավատարմատարին, ով կօգնի գրանցման գործընթացում:

3. Շատ երկրներում արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքները պահպանելու համար մուծվում է պահպանության ժամկետի երկարաձգման տուրք, սովորաբար 5 տարի ժամկետով:

4. Եթե արդյունաբերական նմուշը պահպանության է ներկայացվում օտարերկրյա պետություններում, ապա վարձավճար է մուծվում նաև նմուշի թարգմանության համար:

Ինչ պետք է անել, եթե Ձեր արդյունաբերական նմուշում համակցված են արտաքին տեսքը և գործառութային բարելավումները

Արտադրանքի գործառութային բարելավումների նկատմամբ բացառիկ իրավունքների ձեռքբերման նպատակով սովորաբար խորհուրդ է տրվում արտադրանքը/եղանակը արտոնագրել կամ ներկայացնել պահպանության որպես օգտակար մոդել, կամ, եթե արտադրանքից ակնհայտ չէ դրա գործառույթը, ապա պահել այն որպես առևտրային գաղտնիք: Հաճախ նոր արտադրանքը համակցում է գործառութային բարելավումները նորարարական արտաքին տեսքի հետ: Ենթադրենք, նախագծել եք մի նոր բջջային հեռախոս: Ձեր հեռախոսը էլեկտրոնային բաղադրամասերի մի շարք բարելավումների արդյունք է և կարող է պահպանվել հեղինակային իրավունքով(ներով), իսկ հեռախոսի ինքնատիպությունը կարող է գրանցվել որպես արդյունաբերական նմուշ:

Կարո՞ղ եք արդյոք դիմել երկուսի համար էլ:

Այո՛:

© *Nokia*

Շատ դիզայներեներ պահպանում են իրենց արտադրանքի տարբեր ասպեկտները մտավոր սեփականության մասին օրենսդրությամբ նախատեսված տարբեր իրավունքներով: Այնուամենայնիվ, կարևոր է հիշել գյուտի/օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի միջև եղած տարբերությունը:

Նմուշի պահպանությունը և գործարար ռազմավարությունը

Ձեռնարկության որոշումները, թե ինչպես, երբ և որտեղ պետք է պահպանել արդյունաբերական նմուշները, կարևոր նշանակություն ունեն արդյունաբերական նմուշի կառավարման վրա այլ առումներով: Հետևաբար, էական է արդյունաբերական նմուշի պահպանության հարցերը ինտեգրել ձեռնարկության ավելի ընդլայնված գործարար ռազմավարության մեջ:

Օրինակ, պահպանության տեսակը, վարձավճարները, պահպանության արդյունավետությունը և արդյունաբերական նմուշի սեփականության հետ կապված հարցերը կարևոր նշանակություն ունեն այն ժամանակ, երբ պետք է որոշվի.

- թե արդյոք արդյունաբերական նմուշի նախագծումը պետք է կատարվի ձեռնարկությունում, թե ավելի լավ է վստահել այլ կազմակերպության,
- գովազդի, առևտրային նպատակներով օգտագործման կամ ցուցահանդեսում հանրային ցուցադրման նպատակով նոր նմուշի նախնական օգտագործման ժամանակահատվածը,
- արտահանման շուկաները,
- եթե պետք է, ապա երբ և ինչպես այլ կազմակերպությունների տրամադրել լիցենզիա կամ արդյունաբերական նմուշի առևտրային նպատակներով օգտագործման լիցենզիա՝ տնտեսական փոխհատուցման պայմանով:

Արտոնագիրը և օգտակար մոդելը այն գյուտերի համար են, որոնք առաջացնում են արտադրանքի գործառույթային բարելավումներ, իսկ արդյունաբերական նմուշի պահպանությունը՝ արտադրանքի տեսքի համար է:

Ով կարող է դիմել արդյունաբերական նմուշի պահպանության համար

Ընդհանրապես, այն անձը, ով ստեղծել է արդյունաբերական նմուշը, կամ պայմանագրով աշխատելու դեպքում՝ նրա գործատուն, կարող է դիմել արդյունաբերական նմուշի գրանցման համար: Հայտատուն կարող է լինել անհատ (օրինակ՝ դիզայներ) կամ իրավաբանական անձ (օրինակ՝ ձեռնարկություն): Երկու դեպքում էլ հայտը կարող է ներկայացվել ուղղակիորեն անձի կողմից կամ հավատարմատարի միջոցով: Արդյունաբերական նմուշների հավատարմատարներն իրականացնում են միայն կողմերի այն գործողությունները, որոնք կապված են արդյունաբերական նմուշների նկատմամբ իրավունքների ձեռքբերման եւ տնօրինման, ինչպես նաեւ այդ իրավունքներին վերաբերող այլ գործողությունների հետ: Օտարերկրյա ֆիզիկական եւ իրավաբանական անձինք« որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն մշտական բնակության վայր կամ իրական եւ գործող արդյունաբերական կամ առեւտրային հաստատություն, համաձայն օրենքի, իրենց իրավունքների ձեռքբերման եւ պահպանության հետ կապված գործերը պետական լիազոր մարմնում վարում են ներկայացուցչի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Ով է արդյունաբերական նմուշի իրավունքի սեփականատերը (իրավատերը)

Սովորաբար արդյունաբերական նմուշի ստեղծողը, այսինքն դիզայները, արդյունաբերական նմուշի առաջին իրավատերն է: Վկայագիրը տրվում է կամ արդյունաբերական նմուշը գրանցվում է այն անձի անունով, որը վկայագիր տալու կամ արդյունաբերական նմուշը գրանցելու պահին նշված է որպես հայտատու: ՀՀ օրենքի համաձայն ծառայողական պարտականությունների կամ գործատուի առաջադրանքը կատարելու ընթացքում գործառուի ստեղծած արդյունաբերական սեփականության օբյեկտի (ծառայողական արդյունաբերական նմուշ) վկայագիր ստանալու իրավունքը պատկանում է գործատուին, եթե դա նախատեսված է նրանց միջեւ կնքված պայմանագրով:

Այսինքն, եթե արդյունաբերական նմուշը ստեղծվել է աշխատանքային պայմանագրով նախատեսված պայմաններով՝ աշխատանքային ժամերի ընթացքում, ձեռնարկության ներսում և կազմում է ձեռնարկության կողմից սահմանված պարտականությունների մասը, ապա արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները կպատկանեն գործատուին պայմանագրի համաձայն, կամ կպահանջվի դրանց փոխանցումը գրավոր պաշտոնական համաձայնգարով: Եթե նմուշը ստեղծվել է ձեռնարկությունում չաշխատող դիզայների կողմից՝ պայմանագրով, ապա այն սովորաբար պատկանում է արդյունաբերական նմուշը պատվիրած ձեռնարկությանը: Այս դեպքում համարվում է, որ արդյունաբերականնմուշը ստեղծվել է այն անձի օգտագործման համար, որը պատվիրել է այն և որը, հետևաբար, իրավատերն է:

Օրինակ. DURACELL

Մինչև 1980-ականները Duracell-ը փաստորեն մեկ արտադրանք արտադրող ձեռնարկություն էր, որն արտադրում էր ալկալիական մարտկոցներ: 1981թ. Duracell-ը վարձեց խորհրդատու-դիզայներներ՝ գրպանի լուսարձակների արտադրության համար, որն սկսվեց դրանից ամսիջապես հետո՝ 1982թ.: Երկու տարի անց լուրսարձակի դիզայնը շահեց Միացյալ թագավորության նմուշների խորհրդի մրցանակը: Տարիների ընթացքում Duracell-ը ներկայացրել է գրպանի լուսարձակների զանազան տարբերակներ տարբեր դիզայններով, տարբեր սպառման շուկաների համար: Երիտասարդ տարիքի սպառողների համար արտադրվող լուսարձակները նախագծված էին մոդայիկ գույներով:

Արտադրանքի նորարարական գործառույթային առանձնահատկությունները պահպանվեցին արտոնագրերով, իսկ արդյունաբերական նմուշին պահպանություն տրվեց այն բոլոր հիմնական երկրներում, որտեղ Duracell-ը ներկայումս առևտուր է անում:

Duracell ®

www.aipa.am

Ավելի ուշ ծագող թյուրիմացություններից կարելի է խուսափել, դիզայների հետ կնքված բնօրինակ պայմանագրում իրավունքների պատկանելիության հետ կապված հարցերի պարզաբանումը նշելու միջոցով:

Կարելի՞ է արդյոք մեկ հայտի միջոցով դիմել բազմաթիվ տարբեր արդյունաբերական նմուշների գրանցման համար

Արդյունաբերական նմուշի հայտը կարող է ներառել մի քանի արդյունաբերական նմուշներ, պայմանով, որ դրանք վերաբերում են արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման մեկ դասին, բացառությամբ զարդանախշերի: Շատ երկրներում մեկ հայտի միջոցով հնարավոր է դիմել բազմաթիվ արդյունաբերական նմուշների (10, 20 կամ նույնիսկ 50 արդյունաբերական նմուշ) գրանցման համար, եթե նրանք առնչվում են միևնույն արտադրանքին կամ արտադրանքի «դասին»:

Սա նշանակում է, որ եթե Դուք նախագծել եք աթոռների, սեղանների և պահարանների կոմպլեկտ ու ցանկանում եք իրավական պաշտպանության հանձնել դրանք, ապա շատ երկրներ թույլ կտան Ձեզ մեկ հայտի մեջ ներառել դրանք, վճարելով միայն մեկ հայտի վարձավճար, քանի որ դրանք բոլորը պատկանում են ապրանքի նույն դասին: Եթե, այնուամենայնիվ, ցանկանաք դրանց հետ պահպանել նաև լուսամփոփ, ամենայն հավանականությամբ Ձեզանից կպահանջվի ներկայացնել առանձին

Օրինակ. Ցուցապահարան

Ցուցապահարանը Գեւորգ Վարդանյանի կողմից նախագծված և Արտաշես Գաբրիելյանի կողմից վաճառվող ու առևտրային շրջանառության մեջ մտցված ցուցապահարան է: Այն նախապես նախագծվել է որպես ապակե որմնախորշ՝ գինիները պահելու նպատակով, որը պահանջում էր գեղեցիկ արտաքին տեսքով, հարմարավետ, եղանակի փոփոխություններին չենթարկվող և քիչ խնամք պահանջող պայմանների ստեղծում:

Տարիների ընթացքում Ցուցապահարանը կարող է դառնալ հաջող արտադրանք, մասամբ իր կիրառական նախագծի շնորհիվ, և տարածված ամբողջ աշխարհով մեկ, տարբեր երկրներում օգտագործվել որպես գինու պահպանման համար գեղեցիկ մառան:

Ցուցապահարանը Հայաստանում պահպանվում է որպես արդյունաբերական նմուշ:

Սա Արտաշես Գաբրիելյանի բացառիկ իրավունքն է Հայաստանում եւ, միջազգային գրանցման դեպքում՝ այլ երկրներում նմուշի պահպանման միջոցով արտադրանքի առևտրային շրջանառության եւ եկամուտ ստանալու նկատմամբ: Արտաշես Գաբրիելյանը կարող է լիցենզավորել այն արտասահմանյան կազմակերպություններին արտադրելու Ցուցապահարանը՝ սահմանված հեղինակային վճարներ կատարելու պայմանով:

հայտ: Այսինքն, լուսամփոփները չեն պատկանում արտադրանքի այդ նույն դասին: Ընդհանրապես, չնայած վարձավճարներ մուծվում են յուրաքանչյուր առանձին նմուշի համար, դրանք զգալիորեն ավելի քիչ են, քան կլինեին այն դեպքում, եթե յուրաքանչյուր նմուշի համար ներկայացվեր առանձին հայտ:

Այնուամենայնիվ, որոշ երկրներում յուրաքանչյուր նմուշի համար պահանջվում է ներկայացնել առանձին հայտ: Այդ երկրներից շատերը, սահմանափակելով դիմումի հայտը մեկ նմուշի համար, թույլատրում են նմուշի մի քանի տարբերակներ: Մյուսները թույլատրում են որպես «եզակի նմուշի» կանոնին բացառություն այն դեպքում, երբ բոլոր նմուշներն առնչվում են «իրերի կոմպլեկտի» հետ:

- Տարբերակները կարող են ներառել, օրինակ, երկու ականջող, որոնք տարբերվում են նրանով, որ դրանցից մեկը ամրացնելով է, իսկ մյուսը՝ ծակված ականջի համար է: Որպեսզի դրանք համարվեն տարբերակներ, նմուշները պետք է կիրառվեն նույն իրի վրա և չպետք է էականորեն տարբերվեն մեկը մյուսից:

- Մյուս կողմից, «կոմպլեկտը» բնորոշվում է որպես նույն ընդհանուր բնույթն ունեցող մի քանի իրեր, որոնք բնականորեն վաճառվում են միասին, կամ ենթադրվում է, որ օգտագործվում են միասին, և որոնք ունեն դիզայնի մի քանի ընդհանուր առանձնահատկություններ: Որպես օրինակ կարող են ծառայել խոհանոցային կտրող սպասքի հավաքածուն cutlery (պատառաքաղ, գդալ, դանակ) և կենցաղային իրերը (մազերի չորացուցիչը և դրա ծայրադիրներն ու խոզանակները):

Ինչպես տեսնում եք, գոյություն ունի լայն բազմազանություն այն առումով, թե մեկ դիմումի հայտի մեջ ինչ կարող է ընդգրկվել:

Արդյունավետ պահպանության ապահովման պայմանների և հնարավորությունների վերաբերյալ լիարժեք մանրամասները տրամադրվում են կամ հավատարմատարի կամ էլ համապատասխան ՄՍ/մտավոր սեփականության գրասենյակում:

Կարո՞ղ եք արդյոք լիցենզավորել Ձեր արդյունաբերական նմուշները

Արտոնագրատերը, ինչպես նաեւ արդյունաբերական նմուշի իրավատերն իր իրավունքներն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող է պայմանագրով

Դասակարգման միջազգային համակարգը

Որոնումը հեշտացնելու համար արդյունաբերական նմուշները սովորաբար դասակարգվում կամ խմբավորվում են դասերի մեջ: Ձեզ կխնդրեն դիմումի ձևի մեջ նշել արտադրանքի դասը, որի համար մտադիր եք օգտագործել Ձեր նմուշը: Շատ երկրներ արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման համար օգտագործում են **Լոկառնոյի համաձայնագրով ընդունված դասակարգումը:** (տես դասերի ցուցակը հավելված 2); Տես նաև. *www.wipo.int/classifications/en/locarno/about/*

զիջել այլ անձի եւ (կամ) կնքել լիցենզային պայմանագիր:
Արտոնագրատերը կամ արդյունաբերական նմուշի իրավատերը (լիցենզատուն) լիցենզային պայմանագրով թույլատրում է մեկ այլ անձի (լիցենզառուին) արտոնագրով պահպանվող օբյեկտը կամ գրանցված արդյունաբերական նմուշը պայմանագրով նախատեսված ծավալով օգտագործել, իսկ լիցենզառուն պարտավորվում է լիցենզատուին վճարել պայմանագրով սահմանված վճարները եւ իրականացնել պայմանագրով նախատեսված այլ գործողություններ:

Օտարերկրյա պետություններում արդյունաբերական նմուշը լիցենզավորելու համար նախապես պետք է ստանալ արդյունաբերական նմուշի պահպանություն, կամ, առնվազն դիմեք արդյունաբերական նմուշի պահպանության համար տվյալ երկրներում: Երրորդ անձին/անձանց լիցենզային պայմանագրի միջոցով Ձեր արդյունաբերական նմուշի օգտագործման իրավունքի թույլատրումը Ձեր բիզնեսի համար եկամտի լրացուցիչ աղբյուր է և միջոց՝ օգտագործելու ձեռնարկության իրավունքի բացառիկությունը իր գրանցած արդյունաբերական նմուշների հանդեպ:

Արդյունաբերական նմուշների լիցենզային պայմանագրերը հաճախ ներառվում են ավելի լայն լիցենզային պայմանագրերի մեջ, որոնք ընդգրկում են արտադրանքի բոլոր ասպեկտները (այսինքն, ոչ միայն տեսանելի տարրերը):

3. Արդյունաբերական նմուշն օտարերկրյա պետություններ ներկայացնելը

Ինչու է անհրաժեշտ նմուշի պահպանությունը օտարերկրյա պետությունում

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արդյունաբերական նմուշը կարող է գրանցվել օտարերկրյա պետություններում: Մինչև գրանցման հայտն այլ պետություն ներկայացնելը հայտատուն պարտավոր է արդյունաբերական սեփականության տվյալ օբյեկտի հայտը ներկայացնել ՀՀ պետական լիազոր մարմին՝ հայտնելով նաեւ օտարերկրյա պետությունում դրա գրանցման մտադրության մասին:

Եթե Ձեր ձեռնարկությունը մտադիր է արտահանել ինքնատիպ արդյունաբերական նմուշ ունեցող արտադրանք, կամ մտադիր է այլ ֆիրմաների լիցենզավորել այդպիսի արտադրանքների արտադրությունը, վաճառքը կամ արտահանումը օտարերկրյա պետություններում, ապա պետք է մտածի այդ երկրներում իր արդյունաբերական նմուշների պահպանության մասին, որպեսզի արտերկրում պահպանության հետեւանքով ստանա նույնպիսի օգուտներ, ինչպիսիք ստանում է ներքին շուկայում:

Ինպես պահպանել արդյունաբերական նմուշն արտերկրում

Արդյունաբերական նմուշի պահպանությունը տարածքային է: Սա նշանակում է, որ ընդհանրապես,

արդյունաբերական նմուշի պահպանությունը սահմանափակված է այն երկրի կամ տարածաշրջանի տարածքով, որտեղ գրանցել եք Ձեր նմուշը: Հետեւապես, եթե ցանկանում եք պահպանել Ձեր արդյունաբերական նմուշը արտահանման շուկայում, ապա պետք է համոզվեք, որ այդ երկրներում գործում է հայտի հիման վրա պահպանությունը:

Անհրաժեշտ է հիշել, որ սովորաբար պահպանության համար առաջին երկրում դիմումի հայտ ներ կայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում կարող եք խնդրարկել առաջնություն այլ երկրներում արդյունաբերական նմուշի պահպանության համար: Այդ ժամանակահատվածի անցնելուց հետո չեք կարողանա դիմել այլ երկրներում նմուշի պահպանության համար, քանի որ Ձեր նմուշն արդեն նոր չի համարվի:

Գոյություն ունեն օտարերկրյա պետություններում արդյունաբերական նմուշի պահպանման երեք ձևեր.

1. **Ազգային ընթացակարգով.** Ձեռնարկությունները կարող են առանձին-առանձին դիմել այն երկրների ՄՍ/մտավոր սեփականության գրասենյակներ, որտեղ նախատեսում են պահպանություն: Այս գործընթացը կարող է բավականին մեծածավալ լինել և թանկ արժենալ, քանի որ ընդհանրապես պահանջվում է թարգմանություն տվյալ երկրի ազգային լեզվով, ինչպես նաև գերատեսչական (իսկ երբեմն էլ իրավական) վարձավճարների մուծում:

2. **Տարածաշրջանային ընթացակարգով.** Եթե ցանկանում եք նմուշի գրանցում մի քանի երկրներում, որոնք ունեն տարածաշրջանային համաձայնագրեր, որը հնարավորություն է տալիս նմուշի գրանցումը մեկից ավելի երկրներում, ապա ՄՍ/մտավոր սեփականության համապատասխան տարածաշրջանային գրասենյակ կարող եք ներկայացնել մեկ դիմումի հայտ:

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արդյունաբերական նմուշը կարող է գրանցվել օտարերկրյա պետություններում:
Մինչեւ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արդյունաբերական սեփականության օբյեկտի հայտն օտարերկրյա պետություն ներկայացնելը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում, հայտատուն պարտավոր է արդյունաբերական սեփականության տվյալ օբյեկտի հայտը ներկայացնել պետական լիազոր մարմին՝ հայտնելով նաեւ օտարերկրյա պետությունում դա արտոնագրելու մտադրության մասին: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով գրանցման գործընթացն ամբողջովին կամ մասնակիորեն իրականացնում է միջազգային մարմինը, ապա Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արդյունաբերական սեփականության օբյեկտի հայտը նշված միջազգային մարմին է ներկայացվում միայն պետական լիազոր մարմնի միջոցով՝ ազգային անվտանգության պահանջներին դրա համապատասխանության դեպքում: (Տես ԳՅՈՒՏԵՐԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ օրենքի 77-րդ հոդվածը):

ՄՍ/Մտավոր սեփականության տարածաշրջանային գրասենյակներն են.

www.aipa.am

- Արդյունաբերական սեփականության աֆրիկական տարածքային գրասենյակը՝ (ARIPO), անգլախոս աֆրիկյան երկրներում արդյունաբերական նմուշների պահպանության նպատակով,

- Բենիլյուքս նմուշների գրասենյակը՝ (BDO), Բելգիայում, Նիդեռլանդներում և Լյուքսեմբուրգում պահպանության համար,

- Ներքին շուկայի ներդաշնակության գրասենյակը՝ (OHIM), Եվրոպական միության երկրներում համայնքային արդյունաբերական նմուշների (Community designs) պահպանության համար,
- Մտավոր սեփականության աֆրիկյան կազմակերպությունը՝ (OAPI), ֆրանսախոս աֆրիկյան երկրներում պահպանության համար:

Տարածաշրջանային ՄՍ/մտավոր սեփականության գրասենյակների վեբ հասցեները տես հավելված 1-ում:

3. Միջազգային ընթացակարգով. Այն ձեռնարկությունները, որոնք ցանկանում են իրենց արդյունաբերական նմուշները գրանցել միջազգային ընթացակարգով մի քանի երկրներում, կարող են օգտագործել արդյունաբերական նմուշների միջազգային ավանդադրման մասին Հաագայի համաձայնագրի կողմից առաջարկվող ընթացակարգը., որը ՄՍՀԿ-ի կողմից կառավարվող համաձայնագիր է: Եթե հայտատուն Հաագայի համաձայնագրի անդամ որևէ պետությունից է, ապա նա կարող է մեկ միջազգային հայտով դիմել ՄՍՀԿ: Այդ դեպքում նմուշը կպահպանվի հայտատուի կողմից նշված ցանկացած երկրներում: Համաձայնագիրը հայտատուին ապահովում է ավելի պարզ և էժան մեխանիզմ՝ տարբեր երկրներում արդյունաբերական նմուշի գրանցման համար: Հաագայի համաձայնագրի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար, ներառյալ անդամ պետությունների ցուցակը, այցելեք ՄՍՀԿ-ի վեբ կայքը հետևյալ հասցեով. www.wipo.int/hague/

Հաագայի համաձայնագրով արդյունաբերական նմուշի գրանցման վարձավճարները տարբեր են՝ կախված պահպանության ենթակա նմուշների թվից և այն երկրների թվից, որտեղ պահպանություն է խնդրարկվում: Օրինակ, 11 երկրներում հինգ նմուշների գրանցման վարձավճարը ըստ Հաագայի համակարգով առաջարկվող միջազգային գրանցման ընթացակարգի կազմում է մոտավորապես 900 շվեյցարական ֆրանկ:

4 Արդյունաբերական նմուշի իրավական պահպանության կիրառումը

Ինչպես կարող եք կիրառել Ձեր իրավունքները, երբ Ձեր արդյունաբերական նմուշը վերարտադրվում, պատճենվում կամ օգտագործվում է ապօրինի:

Մտավոր սեփականության ցանկացած իրավունքի կիրարկումը բարդ հարց է, որի համար խորհուրդ է տրվում փնտրել մասնագիտական օժանդակություն ստանալ բանիմաց ՄՍ/մտավոր սեփականության գործակալի միջոցով: Կարևոր է հիշել, որ արդյունաբերական նմուշի վերարտադրությունը և օրենքի խախտումները հայտնաբերելու և գործողություններ ձեռնարկելու համար հիմնական պատասխանատվությունը դրվում է իրավատիրոջ վրա: Այլ կերպ ասած,

Դուք պատասխանատու եք շուկայում Ձեր արդյունաբերական նմուշի վերահսկման համար, բացահայտելու ցանկացած վերարտադրություն կամ կեղծում և որոշելու, թե ինչպես և երբ գործողություններ ծավալեք դրանց նկատմամբ: ՄՄ/մտավոր սեփականության հարցերով զբաղվող իրավաբանը, բնականաբար, համապատասխան անձն է, ով Ձեզ տեղեկատվություն կտա վերարտադրության, օրինախախտումների, և անբարեխիղճ մրցակիցների դեմ Ձեր երկրում գոյություն ունեցող օրենքներով գործողություններ ձեռնարկելու համար, ինչպես նաև կապահովի խորհրդատվություն, թե ինչպես կարգավորել վիճելի հարցերը:

Եթե հավատացած եք, որ օրինախախտում է կատարվել, որպես առաջին քայլ կարող եք օրինախախտին ուղարկել 'անօրինական գործողություններն արգելելու մասին նամակ', տեղեկացնելով նրան իր նմուշի և Ձեր բացառիկ իրավունքների միջև հավանական հակասության մասին:

Նմանատիպ նամակ գրելու համար խորհուրդ է տրվում դիմել իրավաբանի օգնությանը: Եթե օրինախախտումը շարունակվում է, ապա անհրաժեշտ է օրենքով սահմանված գործողություններ ձեռնարկել օրինախախտի դեմ: Եթե Ձեզ հայտնի է օրինախախտ գործունեության ծավալման վայրը, ապա հնարավոր է խուզարկման օրդերի միջոցով (որը սովորաբար ձեռք է բերվում իրավասու դատարանի կամ ոստիկանության միջոցով) հանկարծակիի բերել և բռնել օրինախախտին, առանց օրինախախտ ձեռնարկությանը/անհատին այդ մասին նախապես զգուշացնելու: Նմուշի իրավատերը շատ երկրներում կարող է միջոցառումներ ձեռնարկել ազգային մաքսային մարմինների միջոցով՝ անօրինական ճանապարհով արտադրված ապրանքների արտահանումն արգելելու նպատակով: Որպես ընդհանուր կանոն, եթե հաստատվում է օրինախախտումը, չափազանց կարևոր է մասնագիտական իրավական խորհրդատվության դիմելը:

Արդյունաբերական նմուշի միջազգային պահպանություն

2001թ. ներքոհիշյալ ձեռնարկությունները Արդյունաբերական նմուշների միջազգային ավանդադրման մասին Հաագայի համակագրի տասը ամենախոշոր օգտագործողներն էին ըստ հայտերի թվի. the Swatch Group, Interior, Sony Overseas, Hermes, Daimler Chrysler, Nokia, Villeroy + Boch A.G., Moulinex, Philips Electronics և Salomon-ը: Այդ թվականին Swatch Group-ը՝ համակարգի ամենամեծ օգտագործողը, Հաագայի համակարգի միջոցով գրանցեց արդյունաբերական նմուշների ավանդադրման 103 հայտ: Swatch Group-ի ժամացույցների տարբերակիչ «տեսքը» Էական առանձնահատկություն է համարվում, որն ազդում է հաճախորդների ընտրության վրա՝ հօգուտ արտադրանքի: Այս պատճառով Swatch Group-ի պես ձեռնարկությունները զգալի դրամական միջոցներ և փորձաքննություն են ներդնում հաջող նմուշների զարգացման համար և ապահովում են իրենց բացառիկ իրավունքները բազմաթիվ երկրներում իրենց արդյունաբերական նմուշների շահագործման համար:

Swatch AG

www.aipa.am

5. Արդյունաբերական նմուշի պահպանության այլ իրավական միջոցներ

Որոնք են նմուշը հեղինակային իրավունքով պահպանության և որպես արդյունաբերական նմուշ պահպանության միջև եղած տարբերությունները:

Որոշ երկրներում հեղինակային իրավունքով նմուշի պահպանությունը տարածվում է նմուշների որոշակի տեսակի վրա:

Գրքի կոշտ կազմ, հեղ.՝ Լենա Թորգոմյան

Երկրների մի մասում կարող եք ձեռք բերել համակցված պահպանություն (այսինքն՝ հեղինակային իրավունքի պահպանություն և արդյունաբերական նմուշի պահպանություն), որոնք կարող են միաժամանակ գոյություն ունենալ միևնույն նմուշի համար, մինչդեռ այլ երկրներում, պահպանության երկու ձևերը բացառում են միմյանց: Որպեսզի լավագույնս պահպանեք Ձեր նմուշը, առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ պահպանության այս երկու ձևերի միջև եղած տարբերությունը:
Ստորև ներկայացված են մի քանի հիմնական տարբերություններ.

Գրանցումը

- Համաձայն արդյունաբերական նմուշի մասին օրենսդրության, արդյունաբերական նմուշն ընդհանրապես պետք է գրանցվի հայտատուի կողմից նախքան նմուշի բացահայտումը կամ հրապարակային որևէ ձևով օգտագործումը առնվազն այն երկրում, ուր խնդրարկվում է պահպանություն: Գրանցման վկայագիրը, որը շնորհվում է պահպանություն արդյունաբերական նմուշի մասին օրենքով, կարող է օգտակար լինել անօրինական գործողությունների դեպքում, քանի որ այն ապահովում է ավելի կայուն հիմքեր, որոնց միջոցով կարող եք պաշտպանել Ձեր բացառիկ իրավունքները:

- Բնօրինակ համարվող գործերում հեղինակային իրավունքը առկա է առանց ձևականությունների: Չնայած տվյալ դեպքում պահպանության համար գրանցումն անհրաժեշտ չէ, որոշ երկրներում գոյություն ունեն հեղինակային իրավունքի ավանդադարանները, որտեղ կարող եք ավանդադնել Ձեր նմուշը և ստանալ վկայագիր:

Պահպանության ժամկետը

- Արդյունաբերական նմուշի պահպանությունը սովորաբար տատանվում է 10 –ից մինչև 25 տարի, կախված պահպանություն խնդրարկվող երկրից: Պետք է հիշել նաև, որ արդյունաբերական նմուշի գրանցման գործընթացը կարող է տևել որոշ ժամանակ և միշտ չէ, որ կհամապատասխանեն փոփոխման հակված ապրանքներին (օրինակ՝ նորաձևությանն առնչվող ապրանքները):

- Երկրների մեծ մասում հեղինակային իրավունքը գործում է հեղինակի կյանքի ընթացքում և նրա մահից հետո 50 կամ 70 տարվա ընթացքում:

Պահպանության ծավալը

- Արդյունաբերական նմուշի գրանցմամբ շնորհված իրավունքը բացառիկ իրավունք է այն իմաստով, որ օրինախախտում է համարվում ցանկացած պատճենում, անկախ այն բանից՝ այն կանխամտածված է եղել, թե՝ ոչ:

- Հեղինակային իրավունքի միջոցով իր իրավունքները պաշտպանելու համար, հեղինակային իրավունքի իրավատերը պետք է ապացուցի, որ ենթադրվող օրինախախտ գործը հեղինակային իրավունքի միջոցով պահպանվող գործի ուղղակի կամ անուղղակի վերարտադրությունն է:

Ապրանքների տեսակները

Շատ երկրներում ոչ բոլոր արդյունաբերական նմուշները կարող են պահպանվել հեղինակային իրավունքով, այլ հիմնականում նրանք, որոնք համարվում են արվեստի գործեր: Չնայած տարբերակումը միշտ չէ, որ կարող է հստակ լինել, որոշ նմուշներ, ինչպես ասենք, արտադրվող ապրանքների ձևը, հնարավոր է որ չպահպանվեն հեղինակային իրավունքի մասին օրենքով, մինչդեռ այլ նմուշներ, ասենք տեքստիլ նմուշները, հաճախ գտնվում են թե՛ հեղինակային իրավունքի, և թե՛ արդյունաբերական նմուշի պահպանության տակ:

Վարձավճարները

Տարբեր երկրներում արդյունաբերական նմուշի գրանցման համար Ձեզ կհետաքրքրի նաև մուծվող վարձավճարների չափը: Ի հավելումն դրա, օգտակար կամ անհրաժեշտ կլինի օգտագործել ՄՍ/մտավոր սեփականության գործակալի ծառայությունները, հայտի ձևակերպման ընթացքում Ձեզ օգնելու համար, ինչը կպահանջի լրացուցիչ ծախսեր:

- Քանի որ մեծ մասամբ հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքները չեն պահանջում հեղինակային իրավունքով պահպանվող գործերի պաշտոնական գրանցում, ապա հեղինակային իրավունքի պահպանության համար ընդհանրապես ուղղակի վճարներ չկան: Սակայն կարող են լինել վճարներ՝ կապված (ա) հեղինակային իրավունքի ավանդադարանում ստեղծագործության ավանդադրման հետ այն երկրներում, որտեղ այն գոյություն ունի, և (բ) վիճելի հարցերի դեպքում սեփականության իրավունքի ապացույց ներկայացնելիս:

Որպես ամփոփում ասենք, որ չնայած գրանցված/արտոնագրված արդյունաբերական նմուշներին տրվող պահպանությունն ավելի հզոր է այն առումով, որ այն ընդգրկում է նույնիսկ ոչ դիտավորյալ օրինախախտումը և շնորհում է գրանցման վկայագիր, որը օրինախախտման դեպքում կարևոր ապացույց է, այն ավելի շատ ջանքեր է պահանջում (ֆինանսական և վարչարարական), քանի որ այն պահանջում է գրանցում և ավելի կարճ տևողություն ունի:

Ամեն դեպքում և, հատկապես, երբ արդյունաբերական նմուշը գրանցված չէ, խորհուրդ է տրվում ինչպես հարկն է գրանցել արդյունաբերական նմուշի զարգացման ուղղությամբ կատարված

բոլոր քայլերը: Յուրաքանչյուր մասնիկի գրանցումը և նշումը, նաև դրանց պատշաճ արխիվացումը կօգնեն իրավախախտման դեպքում:

Օրինակ. Միացյալ թագավորությունում վերջերս կտորի դիզայներների շրջանում անցկացված հասարակական հարցման ընթացքում հարցման ենթարկվածների 80%-ը նշել է, որ իրենք միշտ գրանցել են իրենց բնագիր նմուշները և գիտակցել են հեղանակային իրավունքի ապացուցման համար դրանց կարևորությունը:

Երբ կարող է արդյունաբերական նմուշը պահպանվել ապրանքային նշանների մասին օրենքով

Երբ կարող է նմուշը պահպանվել ապրանքային նշանների մասին օրենքով Ապրանքային նշանը տարբերակիչ նշան է (սովորաբար դա բառ է, նշան, կամ այդ երկուսի համակցությունը), որն օգտագործվում է մի ձեռնարկության արտադրանքը մյուս ձեռնարկությունների արտադրանքներից տարբերելու համար: Որոշ հանգամանքներում արտադրանքի ձևը, դիզայնը կամ փաթեթավորումը համարվում են տարբերակիչ նշաններ տվյալ արտադրանքի համար և կարող են ենթակա լինել պահպանության որպես եռաչափ ապրանքային նշան: Այդպիսի պահպանության օրինակներ են Կոկա կոլայի շիշը կամ Գրանդ Քենդիի Ամանորյա նվերների տուփը: Խորհուրդ է տրվում դիմել ՄՍ/մտավոր սեփականության գործակալի՝ որոշելու համար տվյալ արդյունաբերական նմուշը եռաչափ ապրանքային նշան համարվելու հարցը:

Ապրանքային նշանի պահպանությունն ունի անորոշ ժամանակով նորացվելու առավելությունը, մինչդեռ արդյունաբերական նմուշի պահպանությունը սովորաբար որոշակի սահմանափակ ժամանակի համար է (ընդհանրապես 10 կամ 25 տարի):

Տարբերություն կա նաև ապրանքային նշանի գրանցման վճարի մեջ՝ համեմատած արդյունաբերական նմուշի պահպանության վճարների հետ: Իրավական համակարգից կախված, պահպանության երկու տեսակները կարող են համատեղ կերպով գոյություն ունենալ:

Արդյոք անբարեխիղճ մրցակցության մասին օրենքը պահպանում է Ձեր արդյունաբերական նմուշը

Շատ երկրներում արդյունաբերական նմուշները հաճախ պահպանվում են անբարեխիղճ մրցակցության մասին օրենքով: Այսպես, արդյունաբերական նմուշը պահպանվում է անբարեխիղճ մրցակցություն համարվող գործողություններից, ներառյալ, մասնավորապես, ապրանքի նույնությամբ պատճենումը, կեղծ ապրանք արտադրելը և այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք առաջացնում են շփոթություն, վերարտադրման գործողություններ կամ երրորդ կողմի համբավի օգտագործում: Այնուամենայնիվ, անբարեխիղճ մրցակցության մասին օրենքով պահպանությունը սովորաբար զգալիորեն ավելի թույլ է, իսկ օրինախախտումն ապացուցումը՝ ավելի դժվար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – Օգտակար կայքեր

Ստորև նշված հարցերի մասին կարող եք ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ հետևյալ վեբ հասցեներից.

- մտավոր սեփականության այլ հարցերը բիզնեսի տեսանկյունից,www.wipo.int/sme/

- արդյունաբերական նմուշների մասին ընդհանրապես, www.wipo.int/about-ip/en/

- արդյունաբերական նմուշների գրանցման հետ կապված գործնական ասպեկտները. տես մտավոր սեփականության ազգային և տարածաշրջանային գրասենյակների ցուցակը հավելված 1-ում կամ www.wipo.int/directory/en/urls.jsp

- «Արդյունաբերական նմուշների միջազգային ավանդադրման մասին Հաագայի համաձայնագիրը»,www.wipo.int/hague/en/

- «Արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգումը հիմնադրող Լոկառնոյի համաձայնագիրը, www.wipo.int/classifications (Լոկառնոյի համաձայնագիր)

- Միջնորդություն և հաշտեցում, http://arbiter.wipo.int/

ՀԱՎԵԼՎԱԾ 2 – Ինտերնետային հասցեներ

ՄՄ/Մտավոր սեփականության ազգային և տարածաշրջանային գրասենյակներ
Մտավոր սեփականության աֆրիկյան կազմակերպություն www.oapi.wipo.net

Ալգերիա	www.inapi.org
Ալբանիա	www.alpto.gov.al
Անդորրա	www.ompa.ad
Արգենտինա	www.inpi.gov.ar
Հայաստան	www.armpatent.org
Ավստրալիա	www.ipaustralia.gov.au
Ավստրիա	www.patent.bmvit.gv.at
Բահրայն	www.gulf-patent-office.org.sa/bahrainframe.htm
Բարբադոս	www.caipo.org
Բելառուս	www.belgospatent.org/english/about/history.html
Բելգիա	www.mineco.fgov.be
Բելիզ	www.belipo.bz
Բենելյուքս	www.boip.int
Բենին	www.oapi.wipo.net
Բոլիվիա	www.senapi.gov.bo
Բոտսվանա	www.aripo.org
Բրազիլիա	www.inpi.gov.br
Բուլղարիա	www.bpo.bg
Բուրկինա Ֆասո	www.oapi.wipo.net
Բուրունդի	www.oapi.wipo.net
Կամբոջիա	www.moc.gov.kh
Կամերուն	www.oapi.wipo.net
Կանադա	www.opic.gc.ca
Կենրոնական աֆրիկյան հանրապետություն	www.oapi.wipo.net
Չադ	www.oapi.wipo.net
Չիլի	www.dpi.cl
Չինաստան	www.sipo.gov.cn
Չինաստան (Hong Kong -SAR)	www.ipd.gov.hk
Չինաստան (Macao)	www.economia.gov.mo
Չինաստան (Marks)	www.saic.gov.cn
Կոլումբիա	www.sic.gov.co
Կոնգո	www.oapi.wipo.net
Կոստա Ռիկա	www.registronacional.go.cr

Փղոսկրի Ափ/Cote d'Ivoire	www.oapi.wipo.net
Խորվաթիա	www.dziv.hr
Կուբա	www.ocpi.cu
Կիպրոս	www.mcit.gov.cy/mcit/drcor/drcor.nsf
Չեխիայի հանրապետություն	www.upv.cz
Կոնգոյի դեմոկրատական հանրապետություն	www.oapi.wipo.net
Դանիա www.dkpto.dk	
Դոմինիկյան հանրապետություն	www.seic.gov.do/onapi
Եգիպտոս	www.egypo.gov.eg
Էլ Սալվադոր	www.cnr.gobs.sv
Էստոնիա	www.epa.ee
Եվրասիական արտոնագրային գրասենյակ	www.eapo.org
Եվրամիություն (Ներքին շուկայի ներդաշնակեցման գրասենյակ–OHIM)	www.oami.eu.int
Ֆինլանդիա	www.prh.fi
Ֆրանսիա	www.inpi.fr
Գաբոն	www.oapi.wipo.net
Գամբիա	www.aripo.org
Վրաստան	www.sakpatenti.org.ge
Գերմանիա	www.dpma.de
Գանա	www.aripo.org
Հունաստան	www.obi.gr
Հոնդուրաս	www.sic.gob.hn/pintelec/indice.htm
Հունգարիա	www.mszh.hu/english/index.html
Իսլանդիա	www.patent.is/focal/webguard.nsf/key2/indexeng.html
Հնդկաստան	www.ipindia.nic.in
Ինդոնեզիա	www.dgip.go.id
Իռլանդիա	www.patentsoffice.ie
Իսրայել	www.justice.gov.il
Իտալիա	www.uibm.gov.it
Յամայկա	www.jipo.gov.jm
Ճապոնիա	www.jpo.go.jp
Հորդանան	www.mit.gov.jo
Ղազախստան	www.kazpatent.org/english
Քենյա	www.aripo.org
Քուվեյթ	www.gulf-patent-office.org.sa
Լաոյի Ժողովրդա-դեմոկրատական հանրապետություն	www.stea.la.wipo.net
Լատվիա	www.lrpv.lv
Լիբանան	www.economy.gov.lb

Լեսոտո	www.aripo.org
Լիխտենշտեյն	www.european-patent-office.org
Լիտվիա	www.vpb.lt
Լյուքսեմբուրգ	www.etat.lu/ec
Մալավի	www.aripo.org
Մալազիա	www.mipc.gov.my
Մալի	www.oapi.wipo.net
Մեքսիկա	www.impi.gob.mx
Մոնակո	www.european-patent-office.org/patlib/country/monaco
Մոնտենեգրո	www.yupat.sv.gov.yu
Մարոկկո	www.ompic.org.ma
Մոզամբիկ	www.aripo.org
Նամիբիա	www.aripo.org
Նեպալ	www.ip.np.wipo.net
Նիդեռլանդներ	www.octrooicentrum.nl
Նոր Զելանդիա	www.iponz.govt.nz
Նիգերիա	www.oapi.wipo.net
Նորվեգիա	www.patentstyret.no
Օման	www.gulf-patent-office.org.sa
Պանամա	www.digerpi.gob.pa
Պերու	www.indecopi.gob.pe
Ֆիլիպիններ	www.ipophil.gov.ph
Լեհաստան	www.business.gov.pl/Intellectual,property,protection,90.html
Պորտուգալիա	www.inpi.pt
Կատար	www.gulf-patent-office.org.sa
Կորեայի հանրապետություն	www.kipo.go.kr
Մոլդովայի հանրապետություն	www.agepi.md
Ռումինիա	www.osim.ro
Ռուսաստանի դաշնություն	www.rupto.ru
Սենթ Վինսենթ և Գրենադինյան կղզիներ	196.1.161.62/govt/cipo/index.asp
Սաուդիան Արաբիա	www.gulf-patent-office.org.sa
Սենեգալ	www.oapi.wipo.net
Սերբիա	www.yupat.sv.gov.yu
Սիերա Լեոնե	www.aripo.org
Սինգապուր	www.ipos.gov.sg
Սլովակիայի հանրապետություն	www.indprop.gov.sk
Սլովենիա	www.uil-sipo.si/Default.htm
Սոմալիա	www.aripo.org
Հարավային Աֆրիկա	www.cipro.gov.za
Իսպանիա	www.oepm.es
Սուդան	www.aripo.org

Սվազիլանդ	www.aripo.org
Շվեդիա	www.prv.se
Շվեյցարիա	www.ige.ch
Սիրիայի արաբական հանրապետություն	www.himaya.net
Տաջիկստան	www.tipat.org
Թայլանդ	www.ipthailand.org
Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն	www.ippo.gov.mk
Տոգո	www.oapi.wipo.net
Տրինիդադ և Տոբագո	www.ipo.gov.tt/home.asp
Թունիս	www.inorpi.ind.tn
Թուրքիա	www.turkpatent.gov.tr
Թուրքմենստան	www.eapo.org
Ուգանդա	www.aripo.org
Ուկրաինա	www.sdip.gov.ua
Արաբական Միացյալ Էմիրություններ	www.gulf-patent-office.org.sa
Միացյալ Թագավորություն	www.patent.gov.uk
Տանզանիայի Միացյալ Հանրապետություն	www.aripo.org
ԱՄՆ	www.uspto.gov
Ուրուգվայ	www.dnpi.gub.uy
Ուզբեկստան	www.patent.uz
Վենեսուելա	www.sapi.gov.ve
Յեմեն	www.most.org.ye
Զամբիա	www.aripo.org
Զիմբաբվե	www.aripo.org

Ծանուցում.
Թարմացված տեղեկատվության համար այցելեք հետևյալ ինտերնետային հասցեները. www.wipo.int/members/en/

ՀԱՎԵԼՎԱԾ 3 – Լոկառնոյի համաձայնագիր

Արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգումը ըստ Լոկառնոյի համաձայնագրի

ԴԱՍԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Սննդամթերք
2. Հագուստ և արդուզարդի իրեր (գալանտերիա)
3. Ճամփորդական ապրանքներ, պայուսակներ, հովանոցներ/վրաններ և այլ անհատական պարագաներ, որոնք նշված չեն այլուր
4. Խոզանակներ
5. Տեքստիլ նմուշի ապրանքներ, արհեստական և բնական կտորներ
6. Կահավորում
7. Կենցաղային իրեր, որոնք նշված չեն այլուր
8. Գործիքներ և մետաղյա պարագաներ
9. Փաթեթներ և տարաներ՝ ապրանքները բռնելու և տեղափոխելու համար
10. Պատի և ձեռքի ժամացույցներ, այլ չափող գործիքներ, ստուգող և աղդանշանային գործիքներ
11. Զարդարանքի պարագաներ
12. Տեղափոխման կամ վերամբարձման միջոցներ
13. Էլեկտրականության արտադրման, բաշխման կամ տեղափոխման սարքեր
14. Գրանցող, հաղորդակցող կամ տեղեկատվության վերականգնման սարքեր
15. Մեխանիզմներ, որոնք նշված չեն այլուր
16. Լուսանկարչական, շարժանկարային և օպտիկական սարքեր
17. Երաժշտական գործիքներ
18. Տպագրական և գրասենյակային մեխանիզմներ
19. Գրենական և գրասենյակային սարքեր, նկարիչների և ուսուցողական նյութեր
20. Վաճառքի և գովազդային սարքավորումներ, նշաններ
21. Խաղեր, խաղալիքներ, վրաններ և սպորտային ապրանքներ
22. Զենք, հրաձգային պարագաներ, որսորդական, ձկնորսական և միջատասպան պարագաներ
23. Հեղուկի բաշխման սարքավորումներ, ջրահեռացման, ջեռուցման, օդափոխության և օդի խոնավության/ջերմաստիճանի կարգավորիչներ (կոնդիցիոներ), կոշտ վառելիք
24. Բժշկական և լաբորատոր սարքավորումներ
25. Կառույցներ և կառուցվածքային տարրեր
26. Լուսավորող սարքավորումներ
27. Ծխախոտ և ծխելու հետ առնչվող պարագաներ
28. Դեղագործական և հարդարանքի արտադրանքներ, տուալետի պարագաներ և սարքեր
29. Հրդեհի վտանգից պաշտպանող սարքեր և սարքավորումներ, դեպքերի կանխման և օգնության համար
30. Կենդանիների խնամքի և պահելու իրեր
31. Մնունդ կամ ըմպելիք պատրաստող մեխանիզմներ և սարքեր, որոնք նշված չեն այլուր

99 Խառը (այլ)

Ծանուցում.
Ստացված տեղեկատվության համար այցելեք հետևյալ ինտերնետային հասցե.
www.wipo.int/hague/en/general/classification/html

ՀԱՎԵԼՎԱԾ 4 – Հաագայի համաձայնագիրը

Արդյունաբերական նմուշների միջազգային ավանդադրման մասին Հաագայի համաձայնագրի անդամ պետություններ (2006թ. օգոստոսի դրությամբ)

Աֆրիկայի *Մտավոր սեփականության կազմակերպություն*
Ալբանիա
Բելգիա
Բելիզ
Բենին
Բոսնիա եւ Հերցոգովինա
Բոթսվանա
Բուլղարիա
Գաբոն
Գանա
Գերմանիա
Դանիա
Եգիպտոս
Եվրամիություն
Էստոնիա
Թունիս
Թուրքիա
Իսլանդիա
Իսպանիա
Ինդոնեզիա
Իտալիա
Լեհաստան
Լատվիա
Լիխտենշտեյն
Լիտվա
Լյուքսեմբուրգ
Խորվաթիա
Կոտ Դ՚Իվուար
Կորեայի *Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն*
Հայաստան
Հունաստան
Հունգարիա
Ղրղզստան
Մալի
Մալդիվյան Հանրապետություն
Մակեդոնիայի *նախկին Հարավսլավական Հանրապետություն*
Մարոկկո
Մոնակո
Մոնղոլիա
Մոնտենեգրո
Նամիբիա
Նիդեռլանդներ
Նիգեր
Նորվեգիա
Շվեյցարիա
Ռումինիա
Սան Տոմե եւ Պրինսիպի
Սենեգալ
Սերբիա
Սինգապուր
Սիրիայի Արաբական *Հանրապետություն*
Սլովենիա
Սուրինամ
Վրաստան
Ուկրաինա
Օման
Ֆրանսիա

Անդամ պետություններ 57

«Մտավոր սեփականությունը բիզնեսի համար» շարքից հրատարակություններ

Նշանի ստեղծումը. Ընդհանուր գիտելիքներ ապրանքային նշանի մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՍՀԿ հրատարակություն թիվ 900

Ձգտում կատարելությանը. Ընդհանուր գիտելիքներ արդյունաբերական նմուշի մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՍՀԿ հրատարակություն թիվ 498

Կերտիր ապագան. Ընդհանուր գիտելիքներ արտոնագրերի մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՍՀԿ հրատարակություն թիվ 917

Ստեղծագործական արտահայտություններ. Ընդհանուր գիտելիքներ հեղինակային եւ հարակից իրավունքների մասին, նախատեսված է փոքր եւ միջին ձեռնարկությունների համար, ՄՍՀԿ հրատարակություն թիվ 918

Բոլոր հրատարակությունները մատչելի են ՄՍՀԿ էլեկտրոնային գրախանութից.
www.wipo.int/ebookshop

Հրատարակությունների էլեկտրոնային տարբերակները կարող եք ձեռք բերել ՄՍՀԿ փոքր եւ միջին ձեռնարկությունների բաժնի ինտերնետային կայքից՝ www.wipo.int/sme/en

Կարող եք ձեռք բերել նաեւ ՄՍՀԿ փոքր եւ միջին ձեռնարկությունների բաժնի ամեն ամիս հրատարակվող անվճար էլեկտրոնային թերթը, որը ձեզ կտեղեկացնի ոլորտի կարեւոր իրադարձությունների մասին:
Ինտերնետային կայքի հասցեն է՝ www.wipo.int/sme/en/documents/wipo_sme_newsletter.html

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել՝

Մտավոր սեփականության գործակալություն

Գլխավոր պողոտա, Կառավարական 3-րդ շենք, Երեւան 0010, Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս
+37410 52 06 73
Ֆաքս
+37410 54 34 67
Էլ.փոստ
www.cright@aipa.am

կամ՝ **Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն**

34, chemin des Colombettes
P.O. Box 18, CH-1211 Geneva 20
Switzerland

Հեռախոս
+4122 338 91 11
Ֆաքս
+4122 733 54 28
Էլ.փոստ
wipo.mail@wipo.int

Customization and printing of this material was finenced under the WIPO United States Patent and Trademarks Office (USPTO) Funds in Trust.

Սույն հրատարակության համապատասխանեցումը մտավոր սեփականության օրենսդրությանն ու դրա տպագրությունը իրականացվել է Միացյալ Նահանգների ՄՍՀԿ Արտոնագրային ու ապրանքային նշանների գրասենյակի հիմնադրամի միջոցներով: